ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԼՈՌՈՒ ՄԱՐԶՊԵՏ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

11 հոկտեմբերի 2023թ. թիվ 533-Ա

ԳՈՒՄԱՐ ՀԱՏԿԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Հայաստանի Հանրապետության 2023 թվականի պետական բյուջեի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 8-րդ հոդվածի 1-ին մասով և «Տարածքային կառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 9-րդ հոդվածի 1-ին մասի 2)-րդ կետով, հաշվի առնելով ՀՀ Լոռու մարզպետի աշխատակազմի գլխավոր քարտուղարի տեղակալի զեկուցագիրը՝

Ո ր ո շ ո ւ մ եմ.

1. Հայաստանի Հանրապետության կառավարության 28.09.2023թ. թիվ 1657-Ն որոշման համաձայն ՀՀ Լոռու մարզպետի աշխատակազմին բյուջետային ծախսերի տնտեսագիտական դասակարգման «Այլ նպաստներ բյուջեից» հոդվածով հատկացված գումարներից Լեռնային Ղարաբաղից բռնի տեղահանված բնակիչների սոցիալական խնդիրների լուծման նպատակով անհրաժեշտ օգնություն ցուցաբերելու ընթացքում առաջացած ծախսերը փոխհատուցելու համար, որպես դրամական աջակցություն, հատկացնել 2288460 /երկու միլիոն երկու հարյուր ութսունութ հազար չորս հարյուր վաթսուն/ ՀՀ դրամ՝ համաձայն հավելվածի:

2. Հայաստանի Հանրապետության Լոռու մարզպետի աշխատակազմի գլխավոր ֆինանսիստին՝ հնգօրյա ժամկետում հատկացնել գումարը:

ՀՀ ԼՈՌՈՒ ՄԱՐԶՊԵՏ

11/10/23

X

ԱՐԱՄ ԽԱՉԱՏՐՅԱՆ

Ա.ԽԱՉԱՏՐՅԱՆ

2023թ. հոկտեմբերի 11
ք.Վանաձոր

Հավելված.
ՀՀ Լոռու մարզպետի
2023թ. հոկտեմբերի 11-ի
թիվ 533-Ա որոշման

Հ/հ	**Կազմակերպության անվանումը**	**Գումարը**
1.	Ա/Ձ Էլլա Պողոսյան	394700
2.	Ա/Ձ Գագիկ Ղորուխչյան	1783760
3.	Ա/Ձ Սեդրակ Բաղդասարյան	110000
	Ընդամենը	**2288460**

ՀՀ ԼՈՌՈՒ ՄԱՐԶՊԵՏԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ
ԳԼԽԱՎՈՐ ՔԱՐՏՈՒՂԱՐ

11/10/2023

X

ԿԱՄՈ ԱՇՐԱՖՅԱՆ

Կ.ԱՇՐԱՖՅԱՆ